ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

«ՀՀ ԱՄՎՀ ԳՀԾՁԲ 26/6» ծածկագրով գնման ընթացակարգի
«Հայտերի բացման նիստի»

ք. Էջմիածին **«27» ապրիլի 2026 թ.**

1. Տեղեկություններ **ՀՀ ԱՄՎՀ ԳՀԾՁԲ 26/6** ծածկագրով ընթացակարգի հայտերի բացման նիստի մասին.

1.1 Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի էր ունեցել **26.02.2026 թ.՝** ժամը **11:00**-ին էլեկտրոնային գնումների Armeps.am համակարգի միջոցով:

2. Տեղեկություններ **ՀՀ ԱՄՎՀ ԳՀԾՁԲ 26/6** ծածկագրով ընթացակարգին հայտեր ներկայացրած մասնակիցների մասին.

2.1 Սահմանված ժամկետում և սահմանված կարգի պահանջներին համապատասխան, էլեկտրոնային եղանակով հայտ էին ներկայացրել հետևյալ մասնակիցները.

Հ/Հ	Հայտ ներկայացրած մասնակցի /ընկերության/			
	անվանումը	հասցեն	էլ. փոստի հասցեն	ՀՎՀՀ
1.	«Երանկյուն Պրոջեքտ» ՍՊԸ	Կոտայք, ք. Եղվարդ, Պ. Սևակի 1 փ., 25	erankyunproject@gmail.com	03546392
2.	«Ա-ԷՆ Քոնսթրաքշն» ՍՊԸ	Արարատ, ք. Վեդի, Արցախի փ. 19	masivec@mail.ru	04228922

3. **«ՀՀ ԱՄՎՀ ԳՀԾՁԲ 26/6»** ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի որոշումների մասին.

3.1 Գնահատող հանձնաժողովը «Երանկյուն Պրոջեքտ» ՍՊԸ-ի և «Ա-ԷՆ Քոնսթրաքշն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերի ուսումնասիրությամբ պարզել էր, որ «Երանկյուն Պրոջեքտ» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացված հիմնական աշխատակից «Անդրանիկ Պողոսյանը» և «Ա-ԷՆ Քոնսթրաքշն» ՍՊԸ-ի տնօրեն ու «Ա-ԷՆ Քոնսթրաքշն» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացված հիմնական աշխատակից «Անդրանիկ Պողոսյանը» նույն անձինք էին: Վերոգրյալը Գնահատող հանձնաժողովին հիմք էր տվել ենթադրելու, որ «Երանկյուն Պրոջեքտ» ՍՊԸ-ն և «Ա-ԷՆ Քոնսթրաքշն» ՍՊԸ-ն գործել են փոխկապակցված և (կամ) համաձայնեցված, որը արգելված գործողություն է և առաջացնում է հայտի մերժման հիմքեր:

3.2 Գնահատող հանձնաժողովը որոշում էր կայացրել կասեցնել հայտերի գանահտման նիստը և դիմել ՀՀ Ֆինանսների նախարարություն՝ դեպքի պարզաբանման նպատակով:

3.3 Գնահատող հանձնաժողովը ստացել է ՀՀ Պետական վերահսկողության ծառայության գրությունն այն մասին, որ նշված ընկերությունների ընդհանուր տնտեսական շահ հետապնդելու հանգամանքը չի փաստվել, սակայն անհրաժեշտ է ստանալ «Երանկյուն Պրոջեքտ» ՍՊԸ-ի և ՍՊԸ-ի աշխատակից Անդրանիկ Պողոսյանի միջև կնքված աշխատանքային պայմանագիրը, որոնց շրջանակում պաշտոնատար անձանց վերապահված լիազորությունների համադրման արդյունքում հնարավոր կդառնա վերջնական որոշման կայացումը:

Միևնույն ժամանակ Գնահատող հանձնաժողովը ստացել է ՀՀ Ֆինանսների նախարարության գրությունն այն մասին, որ Պատվիրատուն կարող է որոշում կայացնել շարունակելու ընթացակարգը՝ հայտերի գնահատումն իրականացնելով առկա տեղեկատվության հիման վրա:

4. Տեղեկություններ հայտեր ներկայացրած մասնակիցների գնային առաջարկների մասին.

4.1 Հայտեր ներկայացրած մասնակիցների առաջարկած գները՝ առանց ԱԱՀ-ի /ՀՀ դրամ/

Չափաբաժնի համարը	Չափաբաժնի անվանումը	Հայտ ներկայացրած մասնակցի /ընկերության/ անվանումը	
		«Երանկյուն Պրոջեքտ» ՍՊԸ	«Ա-ԷՆ Քոնսթրաքշն» ՍՊԸ
1.	200 տեղ հզորությամբ մանկապարտեզի կառուցման նախագծա-նախահաշվային փաստաթղթերի տեղակապման ծառայություն /Վաղարշապատի համայնքապետարանի թիվ 5 «Գարուն» մանկապարտեզ/	4100000	4109000
2.	150 տեղ հզորությամբ մանկապարտեզի կառուցման նախագծա-նախահաշվային փաստաթղթերի տեղակապման ծառայություն /Վաղարշապատի համայնքապետարանի թիվ 7 «Զվարթնոց» մանկապարտեզ/	3700000	3709000

5. «ՀՀ ԱՄՎՀ ԳՀԾՁԲ 26/6» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի որոշումների մասին.

6.1 Գնահատող հանձնաժողովը որոշում է դիմել «Եռանկյուն Պրոջեքտ» ՍՊԸ-ին՝ «Եռանկյուն Պրոջեքտ» ՍՊԸ-ի և ՍՊԸ-ի աշխատակից Անդրանիկ Պողոսյանի միջև կնքված աշխատանքային պայմանագիրը ստանալու համար:

6.2 Գնահատող հանձնաժողովը որոշում է գնման ընթացակարգի 1, 2 չափաբաժինների համար ընտրված մասնակից ճանաչել «Եռանկյուն Պրոջեքտ» ՍՊԸ-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ 0:

Հանձնաժողովի նախագահ՝
Վաղարշապատ համայնքի ղեկավարի տեղակալ՝ Մ. Մկրտչյան

Հանձնաժողովի անդամներ՝
Աշխատակազմի ճարտարապետության, քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետի տեղակալի ժ/պ՝ Լ. Հակոբյան

Աշխատակազմի ճարտարապետության, քաղաքաշինության և հողաշինության բաժնի գլխավոր մասնագետի ժ/պ՝ Հ. Եղիազարյան

Աշխատակազմի ճարտարապետության, քաղաքաշինության և հողաշինության բաժնի գլխավոր մասնագետի ժ/պ՝ Պ. Մանուկյան

Աշխատակազմի գնումների բաժնի պետի տեղակալի ժ/պ՝ Խ. Զազյան

Հանձնաժողովի քարտուղար՝
Աշխատակազմի գնումների բաժնի պետի ժ/պ՝ Շ. Պողոսյան